ԴՎԻՆԻ 1975—1976 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐՅԱՆ, ԱՐԱՄ ՔԱՂԱՆԹԱՐՅԱՆ

Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք, առևտրա-արհեստավորական և մշակութային խոշոր կենտրոն Դվինի պեղումները շարունակվում են շուրջ 40 տարի։ Դվինն այն եզակի հուշարձաններից է, որտեղ կյանքը գոյատևել է մ. թ. ա. 3-րդ հազարամյակից մինչև մ. թ. XIII դ. սկիզբը՝ քաղաքի կործանումը մոնղոլական ավարառուների կողմից[1]։ Բնակավայրի բազմաշերտությունը հնարավորություն է ընձեռում շատ հարցեր լուծել կոմպլեքսային ձևով՝ դիտել պատմական զարգացումը, տալ տարբեր ժամանակաշրջանների անցումների առանձնահատկությունները, երևան բերել մշակույթի մեջ տիրող ավանդույթները։

Վերջին երկու տարիներին պեղումները տարվել են հիմնականում քաղաքաշինության հետ կապված առանձին հարցերի լուծման ուղղությամբ։ Կարևոր շերտագրական դիտողություններ են կատարվել քաղաքի վաղմիջնադարյան և անկման շրջանների վերաբերյալ, շինարարական ընդհանուր համալիրների մեջ, բացահայտվել են արտադրական բնույթի կառույցներ, հայտնաբերվել են հետաքրքիր նյութեր։

Պեղումների աշխատանքները կենտրոնացված են եղել քաղաքի միջնաբերդի արևմտյան ստորին հատվածում, պարսպապատին անմիջապես կից և կենտրոնական թաղամասում, ուր շարունակվել և ավարտվել են V դ. պալատական մեծ շինության սյունազարդ դահլիճի պեղումները։ Մասնակի պեղվել է նաև միջնաբերդի գագաթը և հետազոտվել է քաղաքի տարածքի արևելյան մասը։

1975 թ. միջնաբերդից արևելք (մոտ 300 մ հեռավորությամբ), Ն. Դվինի կոլտնտեսության դաշտում, գտնվեցին տուֆե երկու արձան, ուղղահայաց խորը ակոսներով քարե սյան գլան և խեցեղեն։ Քաղաքի այդ հատվածում սիստեմատիկ պեղումներ չեն կատարվել, սակայն տարբեր տարիներ գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ երևան են եկել նյութեր, որոնք խիստ արժեքավոր են Հայաստանի մ. թ. ա. 1-ին հազարամյակի հոյաշեն քանդակագործության և պաշտամունքի առանձին հարցերի ուսումնասիրության համար։ Դեռևս 1969 թ., հողային աշխատանքների ժամանակ, նույն հատվածից քիչ հյուսիս բացվեցին բազմաթիվ արձաններով կրոմլեխներ[2]։ Բոլոր արձանների գլուխները կոտրված էին, որը կարող էր տեղի ունենալ հավանաբար քրիստոնեության ընդունման շրջանում։ Ուստի, պատահական

---

1 Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, Վ. Մ. Հարությունյան, Դվինի V—VII դդ. ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950։

2 Կ. Գ. Ղաֆադարյան, Հեթանոսական շրջանի դամբարաններ Դվինում («Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 4, էջ 35—43)։

չպետք է համարել այն փաստը, որ Դվինի վաղմիջնադարյան շինությունների պատերի մեջ հանդիպում են հիշյալ արձանների գլուխները։

1975 թ. գտնված արձանները կատարման տեխնիկայով ռեալիստական են, և իրենց հարդարանքի ու իրանի մանրամասներով տարբերվում են նախորդ տարիներին հայտնաբերվածներից։ Դրանցից մեկը զինվորի արձան է (տախտ. I₂), որի մեջքը, ուսերը և ձեռքերը քանդակված են ամենայն հստակությամբ։ Իրանով շուրջանակի անցնող լայն գոտու ձախ կողմում կախված է երկար թուրը, իսկ աջում՝ կարճ դաշույնը։ Արձանի կրծքամասում և գոտուց ներքև նկատելի են զարդերի հետքեր, քանդակագործը ուղղահայաց և հորիզոնական գծերով ստեղծել է հագուստի պատրանք։

Մյուս արձանը ձեռքերը կրծքին ծալած կնոջ պատկեր է՝ վզին կա երկար ուլունքաշար (տախտ. I₁)։ Այստեղ ևս թույլ գծերով ներկայացված է հագուստը։ Նմանօրինակ արձանների ոտքերի մասերը մշակված չեն։ Դրանք կանգնեցվել են պաշտամունքային վայրերում և, հավանաբար, կապված են եղել պտղաբերության պաշտամունքի հետ։ Հայաստանի տարածքում այդպիսի արձանները հազվադեպ են։ Առայժմ շուրջ 20 նույնատիպ արձաններ հայտնի են Դվինից, մի հատ հայտնաբերվել է Արտաշատ քաղաքի գերեզմանոցից (ցուցադրվում է Խոր Վիրապի թանգարանում), մեկ հատ էլ՝ Մեծամորից։ 1975 թ. հնագետ Գ. Արեշյանը ամբողջական մի արձան գտել է Շամիրամում։ Նյութերի մանրակրկիտ վերլուծությունը ցույց է տալիս, որ հիշյալ արձանների հավանական ժամանակաշրջանը մ. թ. ա. IX—VII դդ. են, որը և համընկնում է Դվինի վաղ բնակավայրի նույն շերտին։

Հետաքրքիր և կարևոր է անտիկ շրջանի սյան գլանի (տրամագիծը՝ 0,50 մ) գյուտը (տախտ. III₂)։ Պատահական չեն նաև սյան, ծածկի քարե սալիկի ու խարիսխների գյուտերը, որոնք մտածել են տալիս Դվինում անտիկ շրջանում ինչ-որ շինության, գուցե և շինությունների առկայության մասին։

Հնագիտական ծավալուն աշխատանքներ տարվեցին Դվինի կենտրոնական թաղամասում։ Այստեղ՝ Կաթողիկե եկեղեցու հարավ-արևմտյան կողմում, արդեն մի քանի տարի է ինչ պեղվում է պալատական մի մեծ շինություն։

Պալատը կառուցվել է V դ. երկրորդ կեսում և ենթադրվում է, որ այն կարող է կաթողիկոսարանի նախնական շինությունը լինել։ Վերջին երկու տարիների ընթացքում ամբողջովին բացվել է պալատի կենտրոնական սյունազարդ դահլիճը (տախտ. I₃)։ Այն ուղղանկյուն սրահ է (չափսերը 22,0×12,0 մ)[3], ունեցել է վեց սյուն, որոնց խարիսխները տեղում պահպանվել են (յուրաքանչյուր կողմում երեքական)։ Վաղմիջնադարյան նման դահլիճների (Դվինի VII դ. պալատ, Զվարթնոց, Արուճ) համեմատությամբ Դվինի դահլիճում միջսյունային թռիչքները ամենամեծն են (8,5×8,4 մ)։ Սյունազարդ դահլիճը կից սենյակների հետ կապվում է 4 մուտքերով։ Դրանցից երկուսը, գրեթե նույն բացվածքով (0,9 մ), հարավ-արևմտյան և հյուսիս-արևելյան անկյուններում են, որոնք, հավանաբար, ծառայողական դեր են կատարել։ Երկու լայն մուտքեր (1,3 մ լայնությամբ) տեղադրված են հյուսիսային պա-

[3] Սյունազարդ դահլիճի բոլոր չափսերը վերցված են ռադիոտրացիոն չափագրություններից։

տի մեջ։ Հարավային պատի մեջ մուտքի հետք չի նկատվում։ Արևելյան պատի հարավային մասի լայն բացվածքով դահլիճը կապվում է այդ կողմի սենյակներից մեկի հետ, սակայն նրա գործառական նշանակությունը դեռևս չի բացահայտված։ Դահլիճի պատերը հիմքում ունեն անմշակ, մեծ և ճեղքված սպիտակ ավազաքարեր, որոնց վրա բարձրանում է հում աղյուսե շարվածքը (տեղ-տեղ պահպանվել են մինչև 1,0 մ բարձրությամբ)։ Պատերը (հաստությունը՝ 1,4—1,5 մ) ներսից և դրսից սվաղված են 3 սմ հաստության կավով, որի ողորկ մակերեսը վերևի հատվածներում, հավանաբար, ներկված է եղել։ Բաց կարմիր գույնի այդպիսի մի բեկոր գտնվել է վերևից թափված ծեփերից մեկի վրա։

Դահլիճի հատակը կավապատ է՝ խճի ոչ հաստ շերտի վրա։ 1976 թ. դահլիճի արևելյան կողմում բացվեց ոչ բարձր մի հարթակ։ Այդ մասի մանրազնին պեղումները հետաքրքիր պատկեր բացեցին։ Արևելյան ծայրի խարիսխների ուղղությամբ հատակը բարձրանում է մոտ 15—20 սմ և կենտրոնական մասով, քառակուսի ելուստով մտնում է դահլիճի մեջ։ Այդ հարթակը, անկասկած, ծառայել է իբրև բեմ, որը կազմել է դահլիճի հանդիսավոր մասը, ուր ժողովների և նման այլ արարողությունների ժամանակ նստել են հոգևոր և աշխարհիկ աստիճանավորներ։

Խիստ ուշագրավ են դահլիճի սյունների խարիսխները և դրանց հարդարանքը։ Խարիսխների չափերը բավական մեծ են (ներքնասալը՝ 1,05—1,11 մ, գլխասալի տրամագիծը՝ 0,82—0,89 մ, բարձրությունը՝ 0,6—0,65 մ) և անկյուններում ունեն եռանկյունաձև ակոսավոր ելուստներ։ Նման հարդարանքով խարիսխները բնորոշ են ինչպես Դվինի, այնպես և Հայաստանի վաղ միջնադարյան մշակույթին, որոնք հանդիպում են Զվարթնոցում (V դ. բազիլիկ եկեղեցու ներսում՝ 2 հատ)[4], Աշտարակի շրջանի Ագարակ գյուղի բազիլիկ եկեղեցու շրջապատում (6 հատ), Եղվարդի հին գերեզմանատանը (2 հատ)։ VII դ. հուշարձաններում խարիսխների ձևերն արդեն այլ են։

Դվինի դահլիճում խարիսխների վրա կանգնեցված են եղել տուֆե սյուներ, որոնք, սակայն, տեղում չեն պահպանվել։ Հետաքրքիր է, որ նույն տեղամասում գտնված սյուներից մեկի տրամագիծը համապատասխանում է վերը նշված խարիսխների վերնասալերի տրամագծին։

Դահլիճի ծածկի մասին, բացի եղեգի մնացորդներով կավե մեծ զանգվածներից, որոշակի տվյալներ չունենք։ Հավանաբար, միջսյունային տարածությունների վրա ծածկը եղել է հազարաշեն։ Այդ են հուշում սյուների մոտի այրված գերանների կույտերը։

Տեղում 30—40 սմ հաստությամբ մոխրաշերտի առկայությունը հիմք է տալիս մտածելու, որ պարատը ավերվել է հրդեհից։ Պալատի ոչնչացման ժամանակը որոշվում է շերտագրական հստակ պատկերով. VII դ. սկզբում շենքն արդեն ավերված է եղել։ Մատենագրական վկայություն կա, որ Սմբատ Բագրատունի մարզպանը հիմնովին վերանորոգել է եկեղեցին[5]։ Վերջինիս

---

4 Ս. Խ. Մնացականյան, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, էջ 242։

5 «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս, 1913, էջ 102, «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 71։

շինարարական նորոգումների ժամանակ առաջացած թափոնների բավական հաստ շերտը (որը շատ լավ թվագրված է) հաջորդում է պալատի վրա նստած մոխրաշերտին, որտեղից դուրս են գալիս նախկին եկեղեցու (V—VI դդ.) հարդարանքի բեկորներ, քանդակազարդ քարեր, խճանկարի հատվածներ և այլն։ Շերտագրական այս պատկերը հնարավորություն է ընձեռում մտածելու, որ պալատն ավերվել է VI դ. 2-րդ կեսին։ Գանձակեցու վկայությամբ Դվինի Կաթողիկե եկեղեցին ու այլ շենքեր հրդեհվել ու կործանվել են 572 թ. ապստամբության ժամանակ[6]։

Սյունազարդ դահլիճի և կից սենյակների տարածքում հստակ սահմանագծված են շերտագրական երեք հորիզոններ։

ա) Առաջին շերտը համընկնում է բուն պալատի կառուցման և գոյատևման ժամանակաշրջանի հետ, որն ընդգրկում է շուրջ 100 տարի՝ V դ. 70-ական թվականներից մինչև VI դ. 70-ական թվականները։ Այդ շերտից գտնված նյութերը սահմանափակ են, սակայն շատ կարևոր՝ վաղմիջնադարյան նյութական մշակույթի ուսումնասիրության համար։ Խեցեղեն անոթների ձևերի բացահայտման առումով հետաքրքրական է այս շերտից հայտնաբերված ամբողջական կճուճը (տախտ. II₁)։ Կճուճի իրանը գրեթե գնդաձև է, հատակը՝ կլոր, կարճ վզի վրայի պսակը ետ ծալված։ Անոթը դրսից և ներսից պատած է եղել սպիտակ անգորով։ Բերանի և հատակի տրամագծերը նույնն են։ Կճուճը թվագրվում է V—VI դդ., իր ձևով նման է Այգևանի նույն շրջանի անոթներին, որոնց ակոնքները երևան են գալիս ուշ անտիկ ժամանակաշրջանի հուշարձաններում, մասնավորապես Արտաշատի վերին շերտերում։

Վաղ շրջանի նյութերի մեջ հատկապես կարևոր է ջնարակած անոթների առկայության փաստը։ Պալատի դահլիճի հատակին գտնվել են կապտականաչավուն ջնարակով հախճապակե կճուճի, թասերի բեկորներ։ Նման անոթների գյուտերը Հայաստանում մ. թ. ա. 1-ին հազարամյակի և հատկապես անտիկ շրջանի հուշարձաններում բավական շատ են։ Վաղ միջնադարում ջնարակած անոթների արտադրությունը զգալիորեն նվազում է. ուստի, դրանց հայտնվելը Դվինում խիստ արժեքավոր է։ Գտնված նյութերի մեջ ուշագրավ են կլոր ոտքով, մուգ կանաչավուն ապակե գավաթի բեկորը, տափակ կոճակները, որոնք մեծ քանակությամբ հանդիպում են Հյուսիսային Կովկասի ժամանակակից դամբարաններում։

բ) Երկրորդ շերտն ընդգրկում է VI դ. վերջից մինչև VII դ. 20-ական թվականները։ Այն փաստորեն ձևավորվել է Սմբատ մարզպանի կողմից Դվինի Կաթողիկե եկեղեցու վերակառուցման ժամանակ առաջացած տուֆի տաշվածքից, որը եկեղեցու վերականգնումն ավարտվելուց հետո, 40—50 սմ հաստությամբ, փռվել է ավերված պալատի վրա։ Այդ տաշվածքի միջից հայտնաբերվել են ինչպես աշխատանքային գործիքներ, այնպես էլ խեցեղեն։ 1971—1974 թթ. նույն շերտում բացվել է ապակեգործական արհեստանոց և ինքնատիպ խեցեղեն։ Շատ յուրօրինակ են քարտաշների երկաթե կացինները, որոնք օգտագործվել են ինչպես կտրելու, այնպես էլ տաշելու համար։ Խեցեղենը, հատկապես կճուճները աչքի են ընկնում միայն այդ շրջանի նյութերին հատուկ խորը ակոսված պսակներով։ Դվինին մոտ հարևանությամբ

---

6 Կիրակոս Գանձակեցի. Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 41։



Տախտակ I





Տախտակ II

Տախտակ III



Տախտակ IV

գործող (նույն շրջանի շերտով) Այգեհան բնակավայրից նման պսակով անոթների գյուտերը զգալիորեն շատ են։ Խճի միջից գտնվել են նաև թասաձև ճրագներ, շատ քիչ ապակի։ Այստեղ ևս հանդիպում են ջնարակած անոթների բեկորներ, որոնք արտագրության մեջ այդ անոթների անընդհատության փաստի վկայությունն են։

Տուֆի տաշվածքի մեջ շատ են հանդիպում V—VI դդ. եռանավ բազիլիկ եկեղեցու ճարտարապետական բեկորներ, քանդակազարդ քարեր (տախտ. III₄), խճանկարի գունագույն քարե հատիկներ և այլն։ Դրանց առկայությունը բացատրվում է նրանով, որ VII դ. վերակառուցման ընթացքում ավերված նախորդ եկեղեցին մաքրվել է փլատակներից, և հարթեցման աշխատանքների ժամանակ մնացորդները փռվել են շրջապատում։

գ) Արաբական տիրապետության շրջանում, մասնավորապես VIII դ. վերջում և IX դ. սկզբներին, եկեղեցու մոտակա հրապարակները կառուցապատվել են հում աղյուսե պատերով շինությունների լայն ցանցով։ Այդպիսի մի համալիր բացվել է դեռևս 1964—1970 թթ.։ Եկեղեցու արևմտյան մասի հում աղյուսե շինությունների այս խումբը ոչնչացել է 893 թ. երկրաշարժի ժամանակ[7], երբ կործանվել է նաև մայր տաճարը։ Հետևաբար, փլատակված շենքերի տնտեսական հորերից դուրս եկող նյութերը թվագրվում են VIII դ. վերջով և IX դ.։ Այդ շերտը փաստագրվում է նաև նույն տեղից գտնված արաբական բազմաթիվ դրամներով[8]։ Եթե շենքերի ճարտարապետական մանրամասները և պատերը պահպանվել են հատվածաբար (մի մասը ոչնչացված է նաև հետագա թաղումների պատճառով) և ընդհանուր պատկեր չեն ստեղծում, ապա հորերում պահպանված հնագիտական նյութերը բացառիկ հետաքրքրական են IX դ. նյութական մշակույթի, արհեստագործական արտադրանքի և այլ սոցիալ-տնտեսական հարցերի ուսումնասիրության առումով։ Հորերում պահպանված անոթների ձևերը հիմնականում նախորդ տարիներին հայտնաբերված անոթների ձևերի կրկնությունն են (դուրս փռված պսակով, լայն նստուկներով ծանծաղ թասեր), սակայն նկարազարդման մեջ, ընդհանուր ոճական նմանության հետ, նկատելի են նաև որոշակի նորություններ։ Դրանք եռագույնով արված լոտոսներ են, եղևնազարդեր, ճառագայթաձև գծեր և այլն (տախտ. II₂, ₄, ₅)։

Դվինի հասարակ խեցեղենն աչքի է ընկնում իր բազմազանությամբ՝ քթիկավոր ճրագներ, սկավառակաձև խփեր, կճուճներ, սափորներ և այլն (տախտ. II ₃, ₆, IV ₂)։ Սրանք ևս նախորդ ձևերի օրգանական շարունակությունն են, միայն՝ պսակների և կանթերի ձևավորումը հարմարեցրած նոր պայմաններին։ Անոթների պատրաստման տեխնիկայում նկատելի են IX դ. բնորոշ երևույթներ։ Այսպես, կճուճների մի քանի ձևերում հատակների և բերանների տրամագծերը նույնն են։ Այդ բանը նկատելի է նաև որոշ ապակե բաժակների վրա։ Ըստ երևույթին, դա մի հնարք էր, որ հատուկ էր հիշյալ շրջանի արտադրությանը։

Հետաքրքիր նյութեր կան սնդկամանների թվագրման վերաբերյալ։ Ընդունված տեսակետի համաձայն՝ սնդկամանները ավելի ուշ են հանդես եկել

---

7 Ա. Ա. Քալանթարյան, Դվին I, Երևան, 1976, էջ 26—29։

8 Դրամների խմբագրությունը որոշել է պատմական գիտությունների դոկտոր Ե. Մուշեղյանը։

(սկսած XI—XII դդ.)[9] և լայն տարածում ստացել XIII դ.։ Դրանք հիմնականում սրածայր նստուկով, երբեմն նիստավոր դրոշմազարդ արձանագրությամբ անոթներ են։ 1975 թ.՝ Դվինի IX դ. շերտերում, լավ թվագրված նյութերի հետ, գտնվեց նաև մի սնդկաման, որը զգալիորեն հնացնում է նրանց ծագման ժամանակաշրջանը։ Դա անզարդ, գնդաձև սնդկաման է, որի նմանը Դվինի նյութերում շատ քիչ կա (տախտ. II 3)։

Համեմատաբար հարուստ է IX դ. ապակու ժողովածուն։ Գտնված նյութերի մեջ բացառիկ հետաքրքրական են փորագիր, երբեմն գունազարդ բաժակները (տախտ. IV 3), որոնք, հավանաբար, ներմուծված են։ Դրանք վճիտ, թափանցիկ ապակուց պատրաստված հաստապատ անոթներ են, որոնց ապակին տարբերվում է լայն տարածում ստացած Դվինի նույն շրջանի ապակիներից։ Բոլորովին նոր ձևեր են վերադիր զարդեր ունեցող, օղակաձև նստուկով բաժակները, մեծ տարողության անոթները և այլն։ Ապակիների բազմազանությունը և ձևերի առատությունը վկայում են Դվինում IX դ. ապակու արտադրության զարգացած լինելու մասին։

Համեմատաբար սակավ են մետաղե իրերը։ Դրանք հայտնվում են նետասլաքների ձևով։ Գտնվել է մի երկաթե ճրագ (տախտ. II 7)՝ որն իր ձևով շատ նման է կավե նավակաձև ճրագներին։ Հավանաբար, դա կավե և մետաղե ձևերի փոխազդեցության հետևանք է։

Դվինի միջնաբերդի ստորին հատվածները, հատկապես քաղաքի գոյության վերջին դարերում, խիստ կառուցապատված են եղել։ Նախորդ տարիների պեղումները արևմտյան մասում երևան են բերել քաղաքացիական, տնտեսական, արտադրական բնույթի շենքերով ամբողջական համալիրներ։ 1975—1976 թթ. պեղումները շարունակվեցին հիմնականում այդ ուղղությամբ. ուսումնասիրվեցին ստորին խավերի առանձնատների համալիրներն իրենց մանրամասներով։ 1975 թ. բացվեց փողոցի մի կարճ հատված, որի երկու կողմերում կառուցված շինությունների մեջ զգացվում են համաչափության ինչ-որ սկզբունքներ և ընդգծվում է ուղիղ գծի ու փողոցի վրա կառուցված շենքերի, ճակատամասերի գաղափարը։

Առաջին մեծ համալիրը 100 ք. մ տարածքով բնակելի շենք է (տախտ III 1)։ Շենքն ունի 8 սենյակ, որից չորսը, հավանաբար, օգտագործվել է բնակության համար, մեկը եղել է հացատուն, իսկ երեքը՝ տնտեսական սենյակներ։ Քանի որ շինությունը կրում է վերակառուցման հետքեր՝ ուստի հնարավոր է, որ սենյակների գործառական նշանակությունը որոշ փոփոխությունների ենթարկված լինի։ Բոլոր բնակելի սենյակներն ունեն կենտրոններից քիչ շեղված թոնիրներ (տախտ. III 3)։ Եթե ընդունենք, որ Դվինում բավականաչափ լայն տարածում ունեին չորս սյուների վրա հենված, հազարաշեն ծածկով տները, ապա այստեղ դիտելի է հարթ ծածկով և երդիկով տների մի նոր ձև, որը կարելի է համարել Դվինի ժողովրդական տների երկրորդ տիպը։ Շրջապատում առանձին կանգնած արտադրական կառույցների առկայությունը հուշում է, որ հիշյալ տունը պատկանել է արհեստավորական ընտանիքի։ Այդ են ապացուցում տեղում գտնված քարե սրածայր, տափակ գործիքները, որոնցով թաց խեցեղեն անոթների վրա արվել են փորագիր զար-

---

9 Հ. Մ. Ջանիոլաղյան, Դվինի ձվաձև անոթները («Աշխատություններ» Հայաստանի պետական պատմական թանգարանի, հ. 3, էջ 147—167)։

դեր։ Հանդիպում են նաև թրծման ժամանակ օգտագործվող գլաններ, եռոտանիներ և այլն։ Այդ հատվածում գտնվել են կշեռքի երկաթե նժարներ։

Հետաքրքիր պատկեր է ներկայացնում կենցաղում օգտագործված խեցեղեն անոթների ուսումնասիրությունը։ Խիստ սահմանափակ է եղել առավելապես ներմուծված հախճապակե անոթների օգտագործումը։ Տեղական, միագույն, կապույտ հախճապակե անոթները մի քանի տեսակ են։ Դրանց հակառակ, շատ հասարակ են ջնարակած անոթները, որոնք իրենց գեղարվեստական կատարմամբ այնքան էլ աչքի չեն ընկնում։

Ջնարակած անոթները կրում են XII—XIII դդ. բնորոշ բուսական, ոճավորված զարդեր։ Անոթների հատակներին կան նաև փորագիր, հստակ ընդգծված զարդեր, որոնք վարպետների հնարամտության արգասիքն են։ Բավականաչափ տարածված են Դվինի վերջին շրջանին բնորոշ, միագույն, կապույտ ջնարակած թասերը։ Հասարակ քրեղանները աչքի են ընկնում դուրս շեշտված պսակներով և բարձր կրունկաձև նստուկներով։ Վերջիններիս մի մասի վրա կան վարպետների նշաններ, որոնք հազվադեպ են Դվինում։

Ուշագրավ են կարմրափայլ, դրոշմազարդ կարասների գյուտերը հիշյալ շինությունից։ Այդ կարասների առկայությունը, բնականաբար, հավաստում է, որ դրանք օգտագործվել են նաև միջին խավերի կենցաղում[10]։

Նույն դծի վրա կառուցված երկրորդ համալիրը զուտ արտադրական բնույթի շինություն է և պատկանում է տվյալ ժամանակաշրջանին։ Այստեղ բացակայում են բնակելի սենյակները, 8,50×7,25 մ չափսի կառույցը բաժանված է երկու հատվածի։ Տարբեր մակարդակների վրա, տեղ-տեղ պահպանված թոնիրներով հատակների հետքերը ցույց են տալիս, որ կառույցը բազմիցս վերանորոգվել է։ Դրա ապացույցն են նաև պատերի վերակառուցումները։ Սենյակներից մեկի հատակի վրա բացվեց 1,2 մ տրամագծով թրծման վառարանի կրակարան։ Հնոցը փոքր է եղել և, հավանաբար, օգտագործվել է սեփական կարիքների համար՝ կավե անոթներ թրծելու նպատակով (տախտ. IV 1)։

Թրծման հնոցի մնացորդների գյուտը Դվինի նման ծաղկուն բնակավայրում, ցավոք, եզակի երևույթ է և խիստ ուշագրավ միջնադարյան արտադրության կազմակերպման հարցերի ուսումնասիրության առումով։

Նույն հատվածում երրորդ շինությունը դրված է արհեստանոցներից հյուսիս և նրանից բաժանված է նեղ միջանցքով։ Այդ շենքը բնակելի է, սակայն նրա պեղումները թերավարտ են և առայժմ դժվար է խոսել նրա գործառական նշանակության մասին։

Այսպիսով, Դվինն իր հնագիտական նյութերով, ճարտարապետական, կոմունալ ու արտադրական կառույցներով մեծ նշանակություն է ձեռք բերում Անդրկովկասի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի միջնադարյան նյութական մշակույթի պատմության, սոցիալ-տնտեսական հարցերի բազմակողմանի ուսումնասիրության ասպարեզում։

---

10 Կ. Դ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 188, Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., հ. 1, Երևան, 1958, էջ 226։

РАСКОПКИ ДВИНА В 1975—1976 ГГ.

КАРО КАФАДАРЯН, АРАМ КАЛАНТАРЯН

Резюме

В 1975 г. к востоку от цитадели Двина случайно были обнаружены две каменные статуи — воина и женщины. Там же был обнаружен каменный фуст античной колонны.

Раскопки велись в основном в центральном квартале города, где был выявлен колонный зал дворца V—VI вв. По всей вероятности, дворец был построен в 70-х годах V века, когда Двин стал духовным центром Армении.

В центральном квартале четко прослеживаются три стратиграфических слоя—V — VI вв., VII—VIII вв. и IX в. Во время раскопок был обнаружен богатый археологический материал — керамические изделия, стекло, железные орудия труда, украшения и т. д.

Нижние склоны цитадели города Двина в XII—XIII вв. были густо заселены. Здесь открыты целые комплексы хозяйственного значения и жилые дома с богатым археологическим материалом. Особо выделяется гончарная мастерская с сохранившейся топкой обжигательной печи.